ԵԴ1/2194/01/23
(ՀԿԴ/0239/01/23)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8 հունվարի 2024 թվական քաղաք Երևան

ուսումնասիրելով թիվ ԵԴ1/2194/01/23 (ՀԿԴ/0239/01/23) քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի՝ 2023 թվականի դեկտեմբերի 27-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը</u>.

1. 2023 թվականի հոկտեմբերի 25-ին Հակակոռուպցիոն դատարանում ստացվել է Աիդա Լյովայի Միլիտոսյանի վերաբերյալ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 2-րդ մասով, Թերեզա Գուրգենի Գրիգորյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 2-րդ մասով, Կարինե Վլադիմիրի Մարկոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 325-րդ հոդվածի 2-րդ մասով և Աիդա Սերյոժայի Ղազարյանի վերաբերյալ ՀՀ

քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 2-րդ մասով թիվ 69131623 (ՀԿԴ/0239/01/23) քրեական վարույթը:

1.1. Հակակոռուպցիոն դատարանը 2023 թվականի հոկտեմբերի 26-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0239/01/23 քրեական վարույթը ստանձնելու և 2023 թվականի նոյեմբերի 6-ին նախնական դատալսումներ նշանակելու մասին:

1.2. Հակակոռուպցիոն դատարանը 2023 թվականի դեկտեմբերի 11-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել քրեական վարույթն ըստ ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ուղարկելու մասին:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2023 թվականի դեկտեմբերի 27-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/2194/01/23 (ՀԿԴ/0239/01/23) քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

3. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի հունվարի 3-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

4. 2023 թվականի մայիսի 12-ի որոշմամբ Աիդա Լյովայի Միլիտոսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 2-րդ մասով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«նա, 2016 թվականի մարտի 8-ից աշխատելով «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲ ընկերության (այսուհետ՝ ԲԿ) պետական պատվերի փաստաթղթերի ձևակերպման աշխատանքների ծառայության ղեկավարի պաշտոնում 2016 թվականի մարտի 8-ից մինչև 2017 թվականի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ԲԿ-ի մեծահասակների պոլիկլինիկայի վարիչի բուժական գծով տեղակալ Թերեզա Գրիգորյանի և բժշկական կենտրոնի այլ աշխատակիցների հանցակցությամբ օժանդակել է օրենքով սահմանված՝ սեփականության իրավունքով բաժնետերերի գույքից առանձնացված գույք և ինքնուրույն հաշվեկշիռ ունեցող առևտրային*

կազմակերպություն հանդիսացող «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲ ընկերության տնօրեն Արա Մինասյանի կողմից ուրիշի՝ առանձնապես խոշոր չափերով 498.410.350 ՀՀ դրամի հափշտակությանը, որպիսի գործողություններն արտահայտվել են հետևյալում.

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲ ընկերության տնօրեն Արա Մինասյանը, ՀՀ առողջապահության նախարարության և «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲ ընկերության միջև «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով անվճար բժշկական և ապաստարկման մատուցման մասին» 2014, 2015, 2016, 2017 թվականներին կնքված պայմանագրերի (այսուհետ՝ նաև պայմանագրեր) շրջանակներում «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» ծրագրով ՀՀ պետական բյուջեի միջոցներից հատկացվող գումարները հափշտակելու միասնական դիտավորությամբ, 2014 թվականի սկզբներին, օգտագործելով բժշկական կենտրոնի ղեկավարի իր կարգավիճակն ու հեղինակությունը, հանցավոր համաձայնություն է ձեռք բերել բժշկական կենտրոնի մի շարք աշխատակիցների հետ և ղեկավարելով հանցակիցների գործողությունները, կատարել է դերաբաշխում, այն է՝ բժշկական կենտրոնի մեծահասակների պոլիկլինիկայի վարիչի բուժական գծով տեղակալ Թերեզա Գրիգորյանին, պետական պատվերի փաստաթղթերի ձևակերպման աշխատանքների ծառայության ղեկավար Նոնա Կարապետյանին, իսկ 2016 թվականի մարտի 8-ից նույն ծառայության ղեկավար Հրդա Միլիտոսյանին և վերջիններիի միջոցով՝ մեծահասակների պոլիկլինիկայի ակնաբուժական, անոթային նյարդաբանական, գինեկոլոգիայի, ընդհանուր վիրաբուժական, ընդհանուր թերապիայի, կրծքային վիրաբուժության, նեյրովիրաբուժության, նեֆրոլոգիայի, շտապ օգնության և վերակենդանացման, արտաբանական, մանասվածքաբանության և օրթոպեդիայի, քիթ-կոկորդ և ուրոլոգիայի բաժանմունքների բուժական անձնակազմին հանձնարարել է բացել կանխարգելիչ բժշկական հետազոտություն անցնելու նպատակով բժշկական կենտրոնի պոլիկլինիկա դիմած՝ ծրագրի շահառու հանդիսացող անձանց անվամբ ստացիոնար բուժման վերաբերյալ կեղծ հիվանդության պատմագրեր և դրանց

հիման վրա կազմված կեղծ տեղեկություններն այն մասին, թե իբր հիշյալ շահառուները ԲԿ-ում ստացիոնար բուժօգնության շրջանակներում հիվանդանոցային պայմաններում ստացել են ստացիոնար բուժօգնություն, ենթարկվել գործիքային և լաբորատոր հետազոտությունների, որոնք ներկայացրել են ՀՀ առողջապահության նախարարություն՝ պետությունից համապատասխան գումարներ ստանալու նպատակով:

Իրագործելով հանցավոր մտադրությունը՝ Սիդա Միլիտոսյանը և Թերեզա Գրիգորյանը, իսկ վերջինների հանձնարարությամբ՝ մեծահասակների պոլիկլինիկայի և ընդհանուր թերապևտիկ բաժանմունքի բուժական անձնակազմի մեջ ներառված մի շարք աշխատակիցներ, կանխարգելիչ բժշկական հետազոտություն անցնելու նպատակով «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲ ընկերության պոլիկլինիկա դիմած ծրագրի շահառու հանդիսացող անձանց անուններով մեկ միասնական դիտավորությամբ 2016 թվականից մինչև 2017 թվականի սեպտեմբերի 30-ը լրացրել են ստացիոնար հետազոտման վերաբերյալ ընդհանուր թվով՝ 2509 կեղծ ուղեգրեր (2016 թվականին՝ թվով 2145, 2017 թվականի մինչև սեպտեմբերի 30-ը՝ թվով 364), որից հետո բժշկական կենտրոնի ստացիոնարում բացել են նույն քանակի անձանց անուններով հիվանդության պատմագրեր, լրացրել «Հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծավալների հաշվառման» 0001 ձևի թերթիկների և դրանցում ակնհայտ կեղծ տեղեկություններ ներառել ամբուլատոր կարգով հետազոտում անցած շահառուների կողմից իբր ստացիոնար բուժում անցնելու, բուժման պլանի, լաբորատոր-գործիքային հետազոտությունների, առկա ախտորոշումների վերաբերյալ: Այնուհետև, հիվանդության պատմագրերի և «Հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծավալների հաշվառման» 0001 ձևի թերթիկների հիման վրա Սիդա Միլիտոսյանն Արա Մինասյանի հանձնարարությամբ, վերջինի հետ նախնական համաձայնությամբ, 2016 թվականի մարտի 8-ից մինչև 2017 թվականի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում պատվիրատու՝ ՀՀ առողջապահության նախարարությանը մոլորության մեջ գցելով, իսբեության եղանակով փորձանալու ու ՓԲ ընկերության հայեցողությամբ ստացված գումարները տնօրինելու

նախնական դիտավորությամբ վերացրել է խոչընդոտները՝ թաքցնելով և խեղաթյուրելով կանխարգելիչ բժշկական հետազոտություն անցնելու նպատակով ԲԿ-ի պոլիկլինիկա դիմած և ծրագրի շահառու հանդիսացող ԲԿ-ում ամբուլատոր կարգով հետազոտում անցած շահառուների կողմից՝ իբր սպացիոնար բուժում անցնելու հանգամանքը՝ իր անունից համապատասխան էլեկտրոնային հավելվածում մուտքագրում կատարելու միջոցով Նախարարությանն է ներկայացրել վերը նշված՝ իրականությանը չհամապատասխանող տեղեկություններով «Պետական պատվերի շրջանակներում կատարված աշխատանքներն ըստ բյուջետային ծրագրերի և բժշկական ծառայությունների տեսակների» ակնհայտ կեղծ փաստաթուղթ հանդիսացող ամսական կատարողական հաշվետվությունները, որոնց հիման վրա ՀՀ առողջապահության նախարարությունը «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» ծրագրով ՀՀ պետական բյուջեից «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության ինքնուրույն հաշվեկշիռ է փոխանցել 498.410.350 ՀՀ դրամ:

Արդյունքում, Միդա Միլիտոսյանն իր գործողություններով, այն է՝ խմբի կազմում նախնական համաձայնությամբ փաստաթղթեր կեղծելու, կեղծ փաստաթղթեր օգտագործելու ցուցումներ տալու և նույնաբնույթ այլ գործողությունների արդյունքում խոչընդոտները վերացնելու միջոցով իրական պայմաններ ստեղծելով, օժանդակել է Արա Մինասյանի կողմից ՀՀ պետական բյուջեի միջոցներից առանձնապես խոշոր չափերով՝ 498.410.350 ՀՀ դրամ հաբեության եղանակով հափշտակությանը, որը վերջինը տնօրինել է իր հայեցողությամբ (…)»[1]:

2023 թվականի մայիսի 12-ի որոշմամբ Թերեզա Գուրգենի Գրիգորյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 2-րդ մասով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ «*նա, 2004 թվականից աշխատելով «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲ ընկերության (այսուհետ՝ ԲԿ) մեծահասակների պոլիկլինիկայի վարիչի բուժական գծով տեղակալի պաշտոնում, 2014 թվականի*

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 18, թերթեր 86-89:

մայիս ամսից մինչև 2017 թվականի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում ԲԿ-ի պետական պատվերի փաստաթղթերի ձևակերպման աշխատանքների ծառայության ղեկավար Նոնա Կարապետյանի, այնուհետև՝ Սիդա Միլիտոսյանի և բժշկական կենտրոնի այլ աշխատակիցների հանցակցությամբ օժանդակել է օրենքով սահմանված՝ սեփականության իրավունքով բաժնետերերի գույքից առանձնացված գույք և ինքնուրույն հաշվեկշիռ ունեցող առևտրային կազմակերպություն հանդիսացող՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲ ընկերության տնօրեն Արա Մինասյանի կողմից խարդախությամբ ուրիշի՝ առանձնապես խոշոր չափերով՝ 908.047.850 ՀՀ դրամի հափշտակությանը, որպիսի գործողություններն արտահայտվել են հետևյալում.

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲ ընկերության տնօրեն Արա Մինասյանը, ՀՀ առողջապահության նախարարության բժշկական կենտրոն «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ՓԲ ընկերության միջև «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով անվճար բժշկական և ապաստարկման ծառայությունների մատուցման մասին» 2014, 2015, 2016, 2017 թվականներին կնքված պայմանագրերի (այսուհետ՝ նաև պայմանագրեր) շրջանակներում «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» ծրագրով ՀՀ պետական բյուջեի միջոցներից հատկացվող գումարներով հափշտակելու միասնական դիտավորությամբ, 2014 թվականի սկզբներին, օգտագործելով բժշկական կենտրոնի ղեկավարի իր կարգավիճակն ու հեղինակությունը, հանցավոր համաձայնություն է ձեռք բերել բժշկական կենտրոնի մի շարք աշխատակիցների հետ և ղեկավարելով հանցակիցների գործողությունները, կատարել է դերաբաշխում, այն է՝ բժշկական կենտրոնի մեծահասակների պոլիկլինիկայի վարիչի բուժական գծով տեղակալ Թերեզա Գրիգորյանին, պետական պատվերի փաստաթղթերի ձևակերպման աշխատանքների ծառայության ղեկավար Նոնա Կարապետյանին, իսկ 2016 թվականի մարտի 8-ից նույն ծառայության ղեկավար Սիդա Միլիտոսյանին և վերջինների միջոցով՝ մեծահասակների պոլիկլինիկայի ակնաբուժական, անոթային նյարդաբանական, գինեկոլոգիայի, ընդհանուր վիրաբուժական,

ընդհանուր թերապիայի, կրծքային վիրաբուժության, նեյրովիրաբուժության, նեֆրոլոգիայի, շրագ օգնության և վերակենդանացման, արտաբանական, վնասվածքաբանության և օրթոպեդիայի, քիթ-կոկորդ և ուրոլոգիայի բաժանմունքների բուժական անձնակազմին հանձնարարել է բացել կանխարգելիչ բժշկական հետազոտություն անցնելու նպատակով բժշկական կենտրոնի պոլիկլինիկա դիմած ծրագրի շահառու հանդիսացող անձանց անվամբ ստացիոնար բուժման վերաբերյալ կեղծ հիվանդության պատմագրեր և դրանց հիման վրա կազմված կեղծ տեղեկություններն այն մասին, թե իբր հիշյալ շահառուները ԲԿ-ում ստացիոնար բուժօգնության շրջանակներում հիվանդանոցային պայմաններում ստացել են ստացիոնար բուժօգնություն, ենթարկվել գործիքային և լաբորատոր հետազոտությունների, որոնք ներկայացրել են ՀՀ առողջապահության նախարարություն՝ այդ կապակցությամբ պետությունից համապատասխան գումարներ ստանալու նպատակով:

Իրագործելով հանցավոր մտադրությունը՝ Թերեզա Գրիգորյանը և Աիդա Միլիտոսյանը, իսկ վերջինների հանձնարարությամբ՝ մեծահասակների պոլիկլինիկայի և ընդհանուր թերապևտիկ բաժանմունքի բուժական անձնակազմի մեջ ներառված մի շարք աշխատակիցներ, կանխարգելիչ բժշկական հետազոտություն անցնելու նպատակով «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲ ընկերության պոլիկլինիկա դիմած ծրագրի շահառու հանդիսացող անձանց անուններով մեկ միասնական դիտավորությամբ 2014 թվականից մայիս ամսից մինչև 2017 թվականի սեպտեմբերի 30-ը լրացրել են ստացիոնար հետազոտման վերաբերյալ ընդհանուր՝ թվով 4689 կեղծ ուղեգրեր (2014 թվականին՝ 861, 2015 թվականին՝ 1319, 2016 թվականին՝ 2145, 2017 թվականի մինչև սեպտեմբերի 30-ը՝ 364), որից հետո բժշկական կենտրոնի ստացիոնարում բացել են նույն քանակի անձանց անուններով հիվանդության կեղծ պատմագրեր, լրացրել «Հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծավալների հաշվառման» 0001 ձևի թերթիկներ և դրանցում ակնհայտ կեղծ տեղեկություններ ներառել շահառուների ստացիոնար բուժում անցնելու, բուժման պլանի, լաբարատոր-գործիքային հետազոտությունների, առկա ախտորոշումների վերաբերյալ: Այնուհետև՝ հիվանդության պատմագրերի և «Հիվանդանոցային

բժշկական օգնության և սպասարկման ծավալման հաշվառման» 0001 ձևի թերթիկների հիման վրա Արա Մինասյանի կազմակերպմամբ Նոնա Կարապետյանը և Աիդա Միլիտոսյանը 2014 թվականից մինչև 2017 թվականի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում կազմել, պատրաստել և պատվիրատու՝ ՀՀ առողջապահության նախարարությանն են ներկայացրել իրականությանը չհամապատասխանող տեղեկություններով «Պետական պատվերի շրջանակներում կատարված աշխատանքներն ըստ բյուջետային ծրագրերի և բժշկական ծառայությունների տեսակների» պաշտոնական փաստաթուղթ հանդիսացող ակնհայտ կեղծ ամսական կատարողական հաշվետվությունները, որոնց հիման վրա ՀՀ առողջապահության նախարարությունը «Պետական հիմնարկների կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» ծրագրով ՀՀ պետական բյուջեից «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության ինքնուրույն հաշվեկշիռ է փոխանցել 908.047.850 ՀՀ դրամ:

Արդյունքում, Թերեզա Գրիգորյանն իր գործողություններով, այն է՝ խմբի կազմում նախնական համաձայնությամբ փաստաթղթեր կեղծելու, կեղծ փաստաթղթեր օգտագործելու, ցուցումներ տալու և նույնաբնույթ այլ գործողությունների արդյունքում խոչընդոտները վերացնելու միջոցով իրական պայմաններ ստեղծելով օժանդակել է Արա Մինասյանի կողմից ՀՀ պետական բյուջեի միջոցներից առանձնապես խոշոր չափերով՝ 908.047.850 ՀՀ դրամ հաբեության եղանակով հափշտակությանը, որը վերջինս տնօրինել է իր հայեցողությամբ»[2]*:*

2023 թվականի սեպտեմբերի 26-ի որոշմամբ Կարինե Վլադիմիրի Մարկոսյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 2-րդ մասով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«նա, զբաղեցնելով «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության (այսուհետև նաև՝ ԲԿ) ընդհանուր թերապիայի բաժանմունքի վարիչի պաշտոնը, 2014 թվականի մայիս ամսից մինչև 2017 թվականի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում բժշկական*

[2] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 18, թերթեր 90-93:

կենտրոնի պետական պատվերի փաստաթղթերի ձևակերպման աշխատանքների ծառայության ղեկավար Նոնա Կարապետյանի, այնուհետև Հրդա Միլիտոսյանի, «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության մեծահասակների պոլիկլինիկայի վարիչի բուժական գծով տեղակալ Թերեզա Գրիգորյանի և բժշկական կենտրոնի այլ աշխատակիցների հետ նախնական համաձայնությամբ, փաստաթղթեր կեղծելու, կեղծ փաստաթղթեր օգտագործելու, ցուցումներ տալու և նույնաբնույթ այլ գործողությունների արդյունքում խոչընդոտները վերացնելու միջոցով իրական պայմաններ ստեղծելով՝ օժանդակել է օրենքով սահմանված՝ սեփականության իրավունքով բաժնետերերի գույքից առանձնացված գույք և ինքնուրույն հաշվեկշիռ ունեցող, առևտրային կազմակերպություն հանդիսացող՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական ընկերության տնօրեն Արա Մինասյանի կողմից իարդախությամբ ուրիշի՝ առանձնապես խոշոր չափերով՝ 908.047.850 ՀՀ դրամի հափշտակությանը, որպիսի գործողություններն արտահայտվել են հետևյալում.

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության տնօրեն Արա Մինասյանը ՀՀ առողջապահության նախարարության և «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲ ընկերության միջև «Պետության կողմից երաշխավորված անվճար արտոնյալ պայմաններով անվճար բժշկական և ապաստարկման ծառայությունների մատուցման մասին» 2014-2017 թվականներին կնքված պայմանագրերի (այսուհետ նաև՝ պայմանագրեր) շրջանակներում «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» ծրագրով ՀՀ պետական բյուջեի միջոցներից հատկացվող գումարները իարդախությամբ հափշտակելու միասնական դիտավորությամբ 2014 թվականի սկզբներին, օգտագործելով բժշկական կենտրոնի ղեկավարի իր կարգավիճակն ու հեղինակությունը, հանցավոր համաձայնություն է ձեռք բերել բժշկական կենտրոնի մի շարք աշխատակիցների հետ և ղեկավարելով հանցակիցների գործողությունները, կատարել է դերաբաշխում, այն է՝ բժշկական կենտրոնի մեծահասակների պոլիկլինիկայի վարիչի բուժական գծով տեղակալ Թերեզա Գրիգորյանին, ընդհանուր թերապիայի բաժանմունքի վարիչ Կարինե Մարկոսյանին, պետական պատվերի փաստաթղթերի ձևակերպման

աշխատանքների ծառայության ղեկավար Նոնա Կարապետյանին, իսկ 2016 թվականի մարտի 8-ից նույն ծառայության ղեկավար Արդա Միլիտոսյանին և վերջինների միջոցով՝ մեծահասակների պոլիկլինիկայի ակնաբուժական, անոթային, նյարդաբանական, գինեկոլոգիայի, ընդհանուր վիրաբուժական, ընդհանուր թերապիայի, կրծքային վիրաբուժության, նեյրովիրաբուժության, նեֆրոլոգիայի, շտապ օգնության և վերակենդանացման, արտաբանական, վնասվածքաբանության և օրթոպեդիայի, քիթ-կոկորդ և ուրոլոգիայի բաժանմունքների բուժական անձնակազմին հանձնարարել է բացել կանխարգելիչ բժշկական հետազոտություն անցնելու նպատակով բժշկական կենտրոնի պոլիկլինիկա դիմած ծրագրի շահառու հանդիսացող անձանց անվամբ ստացիոնար բուժման վերաբերյալ կեղծ հիվանդության պատմագրեր և դրանց հիման վրա կազմված կեղծ տեղեկություններն այն մասին, թե իբր հիշյալ շահառուները ԲԿ-ում ստացիոնար բուժօգնության շրջանակներում հիվանդանոցային պայմաններում ստացել են ստացիոնար բուժօգնություն, ենթարկվել գործիքային և լաբորատոր հետազոտությունների, որոնք ներկայացրել են ՀՀ առողջապահության նախարարություն՝ այդ կապակցությամբ պետությունից համապատասխան գումարներ ստանալու նպատակով:

Կարինե Մարկոսյանը, Թերեզա Գրիգորյանը, Արդա Միլիտոսյանը, իսկ վերջինների հանձնարարությամբ՝ մեծահասակների պոլիկլինիկայի և ընդհանուր թերապևտիկ բաժանմունքի բուժական անձնակազմի մեջ ներառված մի շարք աշխատակիցներ, Արա Մինասյանի կողմից առանձնապես խոշոր չափերով հափշտակության կատարմանը խոչընդոտները վերացնելու, այն է՝ կեղծ փաստաթղթերի կազմմամբ օժանդակելու եղանակով, կանխարգելիչ բժշկական հետազոտություն անցնելու նպատակով «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության պոլիկլինիկա դիմած՝ ծրագրի շահառու հանդիսացող անձանց անուններով, գործելով մեկ միասնական դիտավորությամբ, 2014 թվականից մայիս ամսից մինչև 2017 թվականի սեպտեմբերի 30-ը լրացրել են ստացիոնար հետազոտման վերաբերյալ ընդհանուրը՝ 4689 կեղծ ուղեգրեր (2014 թվականին՝ 861, 2015 թվականին՝ 1319, 2016 թվականին՝ 2145, 2017 թվականի մինչև սեպտեմբերի 30-ը՝ 364), որից հետո բժշկական կենտրոնի ստացիոնարում բացել են

նույն քանակի անձանց անուններով հիվանդության կեղծ պատմագրեր, լրացրել «Հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծավալների հաշվառման» 0001 ձևի թերթիկներ և դրանցում ակնհայտ կեղծ տեղեկություններ ներառել շահառուների՝ ստացիոնար բուժում անցնելու, բուժման պլանի, լաբորատոր-գործիքային հետազոտությունների, առկա ախտորոշումների վերաբերյալ: Այնուհետև, հիվանդության պատմագրերի և «Հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծավալների հաշվառման» 0001 ձևի թերթիկների հիման վրա Արա Մինասյանի կազմակերպմամբ Նոնա Կարապետյանը և Աիդա Միլիտոսյանը 2014 թվականից մինչև 2017 թվականի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում կազմել, պատրաստել և պատվիրատու՝ ՀՀ առողջապահության նախարարությանն են ներկայացրել իրականությանը չհամապատասխանող տեղեկություններով՝ «Պետական պատվերի շրջանակներում կատարված աշխատանքներն ըստ բյուջետային ծրագրերի և բժշկական ծառայությունների տեսակների» պաշտոնական փաստաթուղթ հանդիսացող՝ ակնհայտ կեղծ ամսական կատարողական հաշվետվությունները, որոնց հիման վրա ՀՀ առողջապահության նախարարությունը «Պետական հիմնարկների առողջապահության կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» ծրագրով ՀՀ պետական բյուջեից «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության ինքնուրույն հաշվեկշիռ է փոխանցել 908.047.850 ՀՀ դրամ, որն էլ հափշտակվել է Արա Մինասյանի կողմից»[3]:

2023 թվականի սեպտեմբերի 26-ի որոշմամբ Աիդա Սերյոժայի Ղազարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 2-րդ մասով հանրային քրեական հետապնդում է հարուցվել այն բանի համար, որ *«նա, զբաղեցնելով «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության շտապ օգնության և վերակենդանացման բաժանմունքի ընդունարանային մասի բուժքրոջ պաշտոնը, 2014 թվականի հուլիսի 1-ից կատարելով նույն բժշկական կենտրոնի պետական պատվերով հիվանդների տվյալների համակարգիչ մուտքագրելու պարտավորությունը, իսկ 2016 թվականի*

[3] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 20, թերթեր 45-47:

մարտի 9-ից փոխադրվելով պետական պատվերի փաստաթղթերի ձևակերպման աշխատանքների ծառայության բուժքույր-վերլուծաբանի պաշտոնին, 2014 թվականի հուլիս ամսից մինչև 2017 թվականի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում, բժշկական կենտրոնի պետական պատվերի փաստաթղթերի ձևակերպման աշխատանքների ծառայության ղեկավար Նոնա Կարապետյանի, այնուհետև՝ Սիդա Միլիտոսյանի, «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության մեծահասակների պոլիկլինիկայի վարիչի բուժական գծով տեղակալ Թերեզա Գրիգորյանի և բժշկական կենտրոնի այլ աշխատակիցների հանցակցությամբ օժանդակել է օրենքով սահմանված սեփականության իրավունքով բաժնետերերի գույքից առանձնացված գույք և ինքնուրույն հաշվեկշիռ ունեցող, առևտրային կազմակերպություն հանդիսացող՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության տնօրեն Արա Մինասյանի կողմից խարդախությամբ ուրիշի գույքի՝ առանձնապես խոշոր չափերով՝ 892.776.850 ՀՀ դրամի հափշտակությանը, որպիսի գործողություններն արտահայտվել են հետևյալում.

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության տնօրեն Արա Մինասյանը, ՀՀ առողջապահության նախարարության և «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲ ընկերության միջև «Պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով անվճար բժշկական և ապաստարկման ծառայությունների մատուցման մասին» 2014-2017 թվականներին կնքված պայմանագրերի (այսուհետ նաև՝ պայմանագրեր) շրջանակներում «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» ծրագրով ՀՀ պետական բյուջեի միջոցներից հատկացվող գումարները խարդախությամբ հափշտակելու միասնական դիտավորությամբ, 2014 թվականի սկզբներին, օգտագործելով բժշկական կենտրոնի ղեկավարի իր կարգավիճակն ու հեղինակությունը, հանցավոր համաձայնություն է ձեռք բերել բժշկական կենտրոնի մի շարք աշխատակիցների հետ և ղեկավարելով հանցակիցների գործողությունները, կատարել է դերաբաշխում, այն է՝ բժշկական կենտրոնի մեծահասակների պոլիկլինիկայի վարիչի բուժական գծով տեղակալ Թերեզա Գրիգորյանին, ընդհանուր թերապիայի բաժանմունքի վարիչ Կարինե

Մարկոսյանին, պետական պատվերի փաստաթղթերի ձևակերպման աշխատանքների ծառայության ղեկավար Նոնա Կարապետյանին, իսկ 2016 թվականի մարտի 8-ից նույն ծառայության ղեկավար Սիդա Միլիտոսյանին, ինչպես նաև այդ ծառայության աշխատակից Սիդա Ղազարյանին և վերջիններիի միջոցով՝ մեծահասակների պոլիկլինիկայի ակնաբուժական, անոթային, նյարդաբանական, գինեկոլոգիայի, ընդհանուր վիրաբուժական, ընդհանուր թերապիայի, կրծքային վիրաբուժության, նեյրովիրաբուժության, նեֆրոլոգիայի, շտապ օգնության և վերակենդանացման, արտաբանական, վնասվածքաբանության և օրթոպեդիայի, քիթ-կոկորդ և ուրոլոգիայի բաժանմունքների բուժական անձնակազմին հանձնարարել է բացել կանխարգելիչ բժշկական հետազոտություն անցնելու նպատակով բժշկական կենտրոնի պոլիկլինիկա դիմած ծրագրի շահառու հանդիսացող անձանց անվամբ ստացիոնար բուժման վերաբերյալ կեղծ հիվանդության պատմագրեր և դրանց հիման վրա կազմված կեղծ տեղեկություններն այն մասին, թե իբր հիշյալ շահառուները բժշկական կենտրոնում՝ ստացիոնար բուժօգնության շրջանակներում հիվանդանոցային պայմաններում ստացել են ստացիոնար բուժօգնություն, ենթարկվել գործիքային և լաբորատոր հետազոտությունների, որոնք ներկայացրել են ՀՀ առողջապահության նախարարություն՝ այդ կապակցությամբ պետությունից համապատասխան գումարներ ստանալու նպատակով:

Սիդա Ղազարյանը, Կարինե Մարկոսյանը, Թերեզա Գրիգորյանը, Սիդա Միլիտոսյանը, իսկ վերջիններիի հանձնարարությամբ՝ մեծահասակների պոլիկլինիկայի և ընդհանուր թերապևտիկ բաժանմունքի բուժական անձնակազմի մեջ ներառված մի շարք աշխատակիցներ, Արա Մինասյանի կողմից առանձնապես խոշոր չափերով հափշտակության կատարմանը խոչընդոտները վերացնելու, այն է՝ կեղծ փաստաթղթերի կազմմամբ օժանդակելու եղանակով, կանխարգելիչ բժշկական հետազոտություն անցնելու նպատակով «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության պոլիկլինիկա դիմած ծրագրի շահառու հանդիսացող անձանց անուններով մեկ միասնական դիպավորությամբ, 2014 թվականի մայիս ամսից մինչև 2017 թվականի սեպտեմբերի 30-ը լրացրել են ստացիոնար հետազոտման վերաբերյալ ընդհանուրը՝ 4689 կեղծ ուղեգրեր (2014

թվականին՝ 861, 2015 թվականին՝ 1319, 2016 թվականին՝ 2145, 2017 թվականի մինչև սեպտեմբերի 30-ը՝ 364), որից հետո բժշկական կենտրոնի ստացիոնարում բացել են նույն քանակի անձանց անուններով հիվանդության կեղծ պատմագրեր, լրացրել «Հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծավալների հաշվառման» 0001 ձևի թերթիկներ և դրանցում ակնհայտ կեղծ տեղեկություններ ներառել շահառուների՝ ստացիոնար բուժում անցնելու, բուժման պլանի, լաբորատոր-գործիքային հետազոտությունների, առկա ախտորոշումների վերաբերյալ:

Այնուհետև՝ հիվանդության պատմագրերի և «Հիվանդանոցային բժշկական օգնության և սպասարկման ծավալների հաշվառման» 0001 ձևի թերթիկների հիման վրա Արա Մինասյանի կազմակերպմամբ Նոնա Կարապետյանը և Միդա Միլիտոսյանը, ինչպես նաև նրանց կողմից ղեկավարված ստորաբաժանման աշխատակիցները 2014 թվականից մինչև 2017 թվականի սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում կազմել, պատրաստել և պատվիրատու՝ ՀՀ առողջապահության նախարարությանն են ներկայացրել իրականությանը չհամապատասխանող տեղեկություններով՝ «Պետական պատվերի շրջանակներում կատարված աշխատանքներն ըստ բյուջետային ծրագրերի և բժշկական ծառայությունների տեսակների» պաշտոնական փաստաթուղթ հանդիսացող՝ ակնհայտ կեղծ ամսական կատարողական հաշվետվությունները, որոնց հիման վրա ՀՀ առողջապահության նախարարությունը «Պետական հիմնարկների և կազմակերպությունների աշխատողների սոցիալական փաթեթով ապահովում» ծրագրով ՀՀ պետական բյուջեից «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության ինքնուրույն հաշվեկշիռ է փոխանցել 892.776.850 ՀՀ դրամ, որն էլ հափշտակվել է Արա Մինասյանի կողմից»[4]*:*

5. Հակակոռուպցիոն դատարանը 2023 թվականի դեկտեմբերի 11-ի որոշմամբ արձանագրել է. *«(…) [Հ]արկ է արձանագրել, որ 2003 թվականի ապրիլի 18–ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածը համապատասխանում է գործող ՀՀ քրեական օրենսգրքի 457-րդ հոդվածին (դրա մասին նշված է նաև մեղադրական եզրակացության մեջ), սակայն նշված հանցակազմը պարունակող*

[4] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 20, թերթեր 50-53:

հոդվածն ինչպես նախկին, այնպես էլ գործող ՀՀ քրեական օրենսգրքերով նախատեսված չէ կոռուպցիոն հանցագործությունների ցանկերում (նախկին օրենսգրքի հավելված N 6, գործող օրենսգրքի՝ հավելված N 1):

Ինչ վերաբերում է 2003 թվականի ապրիլի 18–ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածին, ապա նույն օրենսգրքի հավելված N 6-ի համաձայն՝ կոռուպցիոն հանցագործություն է համարվում այն խարդախությունը, որը կատարվել է պաշտոնեական դիրքն օգտագործելով:

Դատարանի գնահատմամբ «պաշտոնեական» հասկացությունը նշանակում է պաշտոնային հատուկ, նրան վերաբերող, պաշտոնի կատարման՝ պաշտոնական պարտականությունների իրականացման կամ պաշտոնների հետ կապված, պաշտոնների ստորակարգությանը վերաբերող, այլ կերպ ասած՝ այն պաշտոնյանին առնչվող երևույթ է:

Նշվածն ուղղակի վկայում է, որ պաշտոնեական դիրքն օգտագործել ասելով՝ պետք է հասկանալ այնպիսի արարքի կատարում, որը բխում է պաշտոնատար անձի լիազորություններից, որոնք սահմանվում են համապատասխան օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով: Ուստի պաշտոնեական դիրքն օգտագործելով կատարված խարդախության սուբյեկտը հատուկ է, այն կարող է կատարվել բացառապես պաշտոնատար անձի կողմից՝ իր պաշտոնեական լիազորությունների կամ զբաղեցրած պաշտոնի հեղինակության օգտագործմամբ:

Հարկ է փաստել, որ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պաշտոնատար անձինք են՝

1) մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող անձինք.

2) պետական մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց կազմակերպություններում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության զինված ուժերում, Հայաստանի Հանրապետության այլ զորքերում և զինվորական միավորումներում մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող անձինք:

Սույն դեպքում թիվ ՀԿԴ/0239/01/23 քրեական գործով մեղադրյալներից որևէ մեկը չի հանդիսացել պաշտոնատար անձ, քանի որ չի իրականացրել մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ իշխանության ներկայացուցչի կամ պետական մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց կազմակերպություններում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության զինված ուժերում, Հայաստանի Հանրապետության այլ զորքերում և զինվորական միավորումներում մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ, այլ հանդիսացել են մասնավոր ընկերության աշխատակիցներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թիվ ՀԿԴ/0239/01/23 քրեական գործով մեղադրյալները մեղսագրվող ենթադրյալ արարքների կատարման պահին չեն հանդիսացել պաշտոնատար անձինք, այլ՝ մեղադրյալ Սիդա Լյովայի Միլիտոսյանը հանդիսացել է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲ ընկերության պետական պատվերի փաստաթղթերի ձևակերպման աշխատանքների ծառայության ղեկավարը, Թերեզա Գուրգենի Գրիգորյանը՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲ ընկերության մեծահասակների պոլիկլինիկայի վարիչի բուժական գծով տեղակալը, Սիդա Սերյոժայի Ղազարյանը՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության շտապ օգնության և վերակենդանացման բաժանմունքի ընդունարանային մասի բուժքույրը, Կարինե Վլադիմիրի Մարկոսյանը՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ բժշկական կենտրոն» ՓԲ ընկերության ընդհանուր թերապիայի բաժանմունքի վարիչը, ուստի 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածով նախատեսված ենթադրյալ հանցագործությունները չէին կարող կատարել պատրոնեական դիրքն օգտագործելով, ինչը վկայում է, որ սույն քրեական գործով առկա չէ կոռուպցիոն հանցագործություն և ընդդատյա չէ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին:

Ավելին՝ նույնիսկ այն անձը, ում ըստ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշումների ենթադրաբար հանցակցել են սույն գործով մեղադրյալները, նույնպես չի հանդիսացել պաշտոնատար անձ, այլ եղել է «Սուրբ

Գրիգոր Լուսավորիչ» ՓԲ ընկերության տնօրենը (մասնավոր ոլորտի վարձու աշխատող)։

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածը համապատասխանում է գործող ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածին, որի պայմաններում խարդախությունը կոռուպցիոն հանցագործություն է համարվում, եթե կատարվել է իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, ապա այդ ծանրացնող հանգամանքը վերաբերելի չէ սույն քրեական գործին։

Այսպես՝ Դատարանն «իշխանական կամ ծառայողական լիազորություններ» հասկացությունները վերլուծության ենթարկելն առարկայազուրկ է համարում, քանի որ մեղսագրվող արարքները կատարելու պահին որպես հանցակազմը ծանրացնող և ըստ այդմ՝ կոռուպցիոն հանցանք դարձնող հանգամանք հանդիսացել է բացառապես պաշտոնեական դիրքն օգտագործելով կատարված խարդախությունը, որն ինչպես նշվել է, վերաբերել է միայն պաշտոնատար անձանց։ Ուստի եթե նույնիսկ օրենսդրական փոփոխությունների արդյունքում կոռուպցիոն հանցագործություն է համարվում նաև մասնավոր ընկերության աշխատակիցների հնարավոր օգտագործած լիազորությունները, ապա միևնույնն է այդ հանգամանքը չի կարող մեղսագրվել սույն գործով մեղադրյալներին, քանի որ (...) արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են դա կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով, իսկ արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքին հետադարձ ուժ տալն արգելվում է։

Այլ կերպ ասած՝ խարդախության այն ծանրացնող հանգամանքում, որը հանցագործությունը դարձնում է կոռուպցիոն բնույթի, տեղի է ունեցել փոփոխություն, մասնավորապես՝ պաշտոնեական դիրք հասկացությունը փոխարինվել է իշխանական կամ ծառայողական լիազորություն հասկացությամբ։ Վերջին հանգամանքը, հնարավոր է, ընդլայնել է սուբյեկտների այն շրջանակը, ովքեր խարդախություն կատարելու պայմաններում կարող են դիտարկվել կոռուպցիոն հանցանք կատարած։ Սակայն սույն գործով ենթադրյալ

հանցագործությունները կատարվել են 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի գործողության ժամանակ, ուստի վերջիններին այնպիսի ծանրացնող հանգամանք մեղսագրելը, որը ենթադրյալ արարքը կատարելու պահին առկա չի եղել, ուղղակիորեն կգանգեցնի արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող քրեական օրենքին հետադարձ ուժ տալուն և ըստ այդմ՝ օրենսդրական հստակ արգելքի խախտման, առավել ևս այն պայմաններում, երբ արարքի հանցավորությունը և պատժելիությունը պետք է որոշվեն դա կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով:

Դատարանի գնահատմամբ չնայած վերը կատարված վերլուծությունները բացառում են սույն գործի ՀՀ հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա լինելու հանգամանքը, սակայն հարկ է նկատել նաև, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 276-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանում վարույթն իրականացվում է միայն մեղադրյալի նկատմամբ և միայն նրան ներկայացված մեղադրանքով:

Դատարանը գտնում է, որ ընդդատության հարցը որոշելիս էական նշանակություն ունի մեղադրանքի փաստական նկարագիրը, քանի որ այն իր մեջ պետք է ներառի և դրանում պետք է նկարագրվեն մեղսագրվող արարքի բոլոր հատկանիշները, հանցակազմի տարրերը, այն որակյալ դարձնող յուրաքանչյուր հանգամանքները:

Դատարանը հարկ է համարում արձանագրել, որ մեղադրյալների նկատմամբ հանրային քրեական հետապնդումներ են հարուցվել 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածներով, սակայն որևէ անձի մեղադրանքի փաստական նկարագրի մեջ առկա չէ որևէ նշում պաշտոնեական դիրքն օգտագործելով կատարված հարդախության մասին, հակառակ դրան՝ հանցակազմը ծանրացնող այլ հանգամանքների օրենսդրական հստակ ձևակերպումներ առկա են, մասնավորապես՝ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ գործելու և առանձնապես խոշոր չափերով գույք հափշտակելու մասին:

Այսինքն՝ սույն դեպքում առկա է այնպիսի իրավիճակ, որ ենթադրյալ արարքները կատարելու պահին մեղադրյալները ոչ միայն չեն հանդիսացել պաշտոնատար անձինք, ինչով պայմնանավորված չէին կարող նաև օգտագործել պաշտոնեական դիրքը, այլ նաև՝ վերջիններին առաջադրված մեղադրանքներում, դրանց փաստական նկարագրերում ևս այդ ծանրացնող հանգամանքը ներառված չէ՝ դրա մասին նշում չկա, սակայն, ինչպես արդեն իսկ նշվել է, հանցակազմի ծանրացնող որևէ հանգամանք անձին մեղսագրելիս դրա օրենսդրական ձևակերպումը նշելը պարտադիր է:

Վերոգրյալը ևս մեկ անգամ ապացուցում է, որ մեղադրյալներից որևէ մեկը չի հանդիսացել պաշտոնատար անձ և չի օգտագործել պաշտոնից բխող լիազորությունները կամ պաշտոնեական դիրքը, հակառակ դեպքում՝ մեղադրանքի ձևակերպումներում առկա կլիներ պաշտոնեական դիրքն օգտագործելու վերաբերյալ նշում, իսկ դրա բացակայությունը վկայում է, որ ներկայացված մեղադրանքն իր մեջ չի պարունակում կոռուպցիոն հանցանք, ինչի հետևանքով սույն վարույթն ընդդատյա չէ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին (...)»[5]:

6. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2023 թվականի դեկտեմբերի 27-ի որոշմամբ արձանագրել է. *«(...) Առաջադրված մեղադրանքից և գործի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ թե՛ Սիդա Միլիտոսյանին, և թե՛ Թերեզա Գրիգորյանին մեղսագրված է կոռուպցիոն բնույթի ենթադրյալ հանցավոր արարքի կատարում, ինչի մասին է վկայում այն հանգամանքը, որ մեղադրյալներին առաջադրված մեղադրանքում նշված է, որ նրանք ենթադրյալ հանցավոր արարքները կատարել են՝ օգտվելով իրենց կարգավիճակից, այսինքն՝ օգտագործելով իրենց ծառայողական լիազորությունները: Իրապես ՀՀ նախկին քրեական օրենսգիրքը չի նախատեսել խարդախության այդ որակյալ հատկանիշը, սակայն դա ամենևին չի նշանակում, որ սույն ենթադրյալ հանցավոր արարքներն այս պահին՝ քրեական վարույթը դատարան ուղարկելիս և դատարանում քննության առնելիս չունեն կոռուպցիոն բնույթ: Դրա մասին է վկայում նաև այն, որ 2021 թվականի մայիսի 30-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածում որպես որակյալ հատկանիշ*

[5] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 21, թերթեր 81-84:

նախատեսվել է խարդախություն կատարելը ծառայողական լիազորություններն օգտագործելու միջոցով, որը կոռուպցիոն բնույթի հանցագործություն է:

Բացի այդ, մեղադրողը մինչև քրեական վարույթը դատարան ուղարկելն արդեն իսկ համապատասխանեցրել է մեղադրյալներին մեղսագրված արարքը ՀՀ նոր քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածին:

Գտնում եմ, որ այս փուլում, ընդդատության հարցը որոշելիս, չի կարող քննարկվել հանցավոր արարքի հետադարձության հարց և այն չի կարող հաշվի առնվել վարույթն ըստ ընդդատության ուղարկելիս: Մեկ հարց է, թե գործն ըստ էության լուծող դատարանը դատաքննության ընթացքում հետադարձության կանոնը ինչպես կմեկնաբանի, և մեկ այլ հարց է, թե ընթացակարգային առումով առերևույթ կոռուպցիոն արարքը որ դատարանին է ընդդատյա: Մեղադրական եզրակացությունից և մեղադրյալներ Արիդա Միլիտոսյանի և Թերեզա Գրիգորյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին որոշումներից ակնհայտ է, որ իրենց մեղսագրվող արարքների փաստակազմը կոռուպցիոն բնույթի է, իսկ մնացած հարցերի պատասխանները կարող են տրվել արդեն դատաքննության արդյունքում(…)»[6]:

<u>Վճռաբեկ դատարանի նախազահի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

7. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Հակակոռուպցիոն դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/2194/01/23 (ՀԿԴ/0239/01/23) քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

8. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

9. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

[6] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 21, թերթեր 126-127:

«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

9.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[7]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[8]:

10. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «*(...) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (...), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու*

---

[7] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[8] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված)։ (…)

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախապաշարմունքվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել։

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[9]։

11. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն։ Ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել՝ իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ։

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ։ Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն։

Անհրաժեշտ է ընդգծել, որ վարույթն ըստ ընդդատության փոխանցելիս չպետք է դրսևորվի չափազանց ձևական մոտեցում, և պետք է հաշվի առնվի նաև արդարադատության շահը։

---

[9] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16։

12. 1998 թվականի հուլիսի 1-ին ընդունված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի համաձայն՝ «*1. Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները քննում են բոլոր քրեական գործերը, բացառությամբ հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա գործերի, քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված այլ գործեր (նյութեր), ինչպես նաև վերահսկողություն են իրականացնում քրեական գործի մինչդատական վարույթի նկատմամբ:*

2. Հակակոռուպցիոն դատարանը քննում է կոռուպցիոն հանցագործությունների վերաբերյալ գործերը, բացառությամբ երբ սույն օրենսգրքի 309.1-ին հոդվածով նախատեսված կարգով առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում դատական քննության ընթացքում առաջադրված մեղադրանքը լրացվում կամ փոփոխվում է, որի արդյունքով անձին առաջադրվում է կոռուպցիոն հանցագործության կատարմանը մասնակցելու մեջ մեղադրանք»:

Նույն օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին ընդդատյա են առաջին ատյանի կարգով իրականացվող բոլոր վարույթները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթների, որոնք ընդդատյա են հակակոռուպցիոն դատարանին»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Նախնական դատաքննության ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այդ որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:*

(…)

5. Վարույթն ըստ ընդդատության ստացած Հակակոռուպցիոն կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, մինչև նախնական դատաքննություն նշանակելը որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա առարկայական ընդդատությանը:

6. Սույն (...) հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերում՝ Վճռաբեկ դատարանի նախագահը, որոշումը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի ընդդատության հարցը: Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքերում Վճռաբեկ դատարանի նախագահը մինչև որոշում կայացնելը խորհրդակցում է Վճռաբեկ դատարանի քրեական և հակակոռուպցիոն պալատների նախագահների հետ՝ վարույթի ընդդատության վերաբերյալ նրանց դիրքորոշումը պարզելու նպատակով:»

13. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Հակակոռուպցիոն դատարանը որոշում է կայացրել վարույթն ըստ ընդդատության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան ուղարկելու մասին՝ փաստելով, որ մեղադրյալները մեղսագրվող ենթադրյալ արարքների կատարման պահին չեն հանդիսացել պաշտոնատար անձինք, հետևաբար ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածով նախատեսված ենթադրյալ հանցագործությունները չէին կարող կատարել պաշտոնեական դիրքն օգտագործելով:

Հակակոռուպցիոն դատարանն արձանագրել է նաև, որ մեղադրյալներին ներկայացված մեղադրանքների փաստական նկարագրի մեջ առկա չէ որևէ նշում առ այն, որ մեղադրյալները ենթադրյալ հանցանքները կատարել են պաշտոնեական դիրքն օգտագործելու եղանակով[10]:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, փաստելով, որ Ա.Միլիտոսյանին և Թ.Գրիգորյանին ներկայացված մեղադրանքներում նշված է, որ նրանք ենթադրյալ հանցավոր արարքները կատարել են՝ օգտվելով իրենց ծառայողական լիազորություններից, գտել է, որ վերջիններիս մեղսագրված է կոռուպցիոն բնույթի ենթադրյալ հանցավոր արարքի կատարում:

Միաժամանակ նշել է, որ թեև ՀՀ նախկին քրեական օրենսգիրքը չի նախատեսել խարդախության՝ *«ծառայողական լիազորություններն օգտագործելու»*

[10] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

հատկանիշը, այնուամենայնիվ դա չի նշանակում, որ մեղադրյալներին մեղսագրվող ենթադրյալ հանցանքները չունեն կոռուպցիոն բնույթ[11]:

14. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 8-12-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ պետք է փաստել, որ մեղադրյալներ Աիդա Միլիտոսյանին, Թերեզա Գրիգորյանին, Կարինե Մարկոսյանին և Աիդա Ղազարյանին ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով ներկայացված մեղադրանքների ձևակերպումներից պարզ է դառնում, որ վերջիններս ենթադրաբար օժանդակել են օրենքով սահմանված՝ սեփականության իրավունքով բաժնետերերի գույքից առանձնացված գույք և ինքնուրույն հաշվեկշիռ ունեցող առևտրային կազմակերպություն հանդիսացող «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն ՓԲ ընկերության տնօրենի կողմից «***բժշկական կենտրոնի ղեկավարի իր կարգավիճակն ու հեղինակությունն օգտագործելու եղանակով»*** խարդախությամբ ուրիշի գույքի հափշտակությանը: Ինչը, համաձայն 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի «Կոռուպցիոն հանցագործությունների ցանկ» N 6 հավելվածի, հանդիսանում է կառուպցիոն հանցագործություն: Հետևաբար, գտնում եմ, որ առկա է սույն վարույթը Հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա լինելու իրավական հիմքը:

Ինչ վերաբերում է Հակակոռուպցիոն դատարանի այն դատողությանը, որ մեղադրյալները ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածով նախատեսված ենթադրյալ հանցագործությունները չէին կարող կատարել պաշտոնեական դիրքն օգտագործելու եղանակով, քանի որ վերջիններս մեղսագրվող ենթադրյալ արարքների կատարման պահին չեն հանդիսացել պաշտոնատար անձինք, հարկ է նշել, որ այն ընդունելի չէ, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածով սահմանված պաշտոնատար անձանց հասկացությունը նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վերաբերելի է «Պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունները» գլխով նախատեսված հանցակազմերին և չի կարող հիմք հանդիսանալ նույն օրենսգրքի 178-րդ հոդվածով նախատեսված՝ խարդախության *«պաշտոնեական դիրքն օգտագործելու»* հատկանիշը մեկնաբանելու համար:

---

[11] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

15. Վերոշարադրյալը հիմք է տալիս փաստելու, որ Հակակոռուպցիոն դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/2194/01/23 (ՀԿԴ/0239/01/23) քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, հիմնավոր չէ:

16. Հետևաբար, հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասը՝ գտնում եմ, որ թիվ ԵԴ1/2194/01/23 (ՀԿԴ/0239/01/23) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 6-րդ մասով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Աիդա Լյովայի Միլիտոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 2-րդ մասով, Թերեզա Գուրգենի Գրիգորյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 2-րդ մասով, Կարինե Վլադիմիրի Մարկոսյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 325-րդ հոդվածի 2-րդ մասով և Աիդա Սերյոժայի Ղազարյանի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 325-րդ հոդվածի 2-րդ մասով թիվ ԵԴ1/2194/01/23 (ՀԿԴ/0239/01/23) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ